


3-490a

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱԼ,
ՎՈՐՊԵՍՁԻ ՊԱՏՐԱՍՏԵԼ,
ԼԱՎ, ԱՇԽԱՏՈՂ,
ԸՆԴՈՒՆԻՉ



Armenia
3-490a
Տ Ե Խ Ե Ի Կ Ա Ն Մ Ա Ս Ս Ա Ն Ե Ր Ի Ն
Բ Ա Դ Ի Ո Յ Ի Ս Ե Ր Ի Յ
44-1202

621.3
p-61

ԻՆՁ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱԼ, ՎՈՐՊԵՍՋԻ
ՊԱՏՐԱՍՏԵԼ ԼԱՎ ԱՇԽԱՏՈՂ ԸՆԴՈՒՆԻՉ

Г.П.Б. в Лигр. М
О.Э. 1932 г.
АНТ № 300

Инв. № 21492

Պետերատի տպարան

Դրավ. № 6887 (P)

Հրատ. № 1883

Պատվ. № 5605

Տիրած 6000



БИБЛИОТЕКА
С.С. БИБЛИОТЕКА
С.С. БИБЛИОТЕКА
С.С. БИБЛИОТЕКА

С.С. БИБЛИОТЕКА

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մենք սովորաբար այնպես ենք կարծում, թե ամեն մի
իր, վոր պատրաստված է արդյունաբերության մեջ,—կառուց-
ված է գործարանում,—անհամեմատ ավելի լավ կլինի նույն
այդ իրից, լեթե վերջինս պատրաստված է ձեռքով, այսինքն՝
«ինքնագործ» իրից։ Վորեւ մեկը մեզնից չի լի մտածի այն-
պիսի բաներ պատրաստել,—ինչպես, որինակ՝ ժամացույցը,
դաշնամուրը,—կամ ազատ ժամերին մահուկ գործել։ Ռա-
դիոտեխնիկան, այդ տեսակետից լեռնանիկ մի բացառություն
է հանդիսանում։ Ռադիոիրերն (գործիքներ) կամ համեմատ
դեպս, նրա ընդունիչ մասերի մեծամասնությունը, վոչ միայն
ամբողջապես մատչելի լին «տնային» պատրաստության տե-
սակետից, այդ դեռ քիչ է. ինքնագործ ընդունիչները, լեթե
նրանց պատրաստման գործին մենք վերաբերվենք հարկ լե-
ղած լրջությամբ և ուշադրությամբ, իրենց վորակով նրանք
գգալիորեն գերադասելի լին գործարանում պատրաստածից։
Ռադիոտեխնիկայի այդ առանձնահատուկ վիճակն է, անտա-
րակույս, վոր հանդիսանում է իբրև հիմնական պատճառներից
մեկն այն հանգամանքի, վոր առաջացել է՝ մարդկության
պատմության մեջ չտեսնված այնպիսի մի վերելքի շարժում,
վորպիսին ռադիոսիրության գործն է (радиолюбитель-
ство)։ Ի՞նչ համար էլ սխալ կլինեն, լեթե մենք կարծեյինք,
վոր ինքնագործ աշխատանքը մենք ի նկատի ունենք վորպես
«եկոնոմիկայի» աղբյուր,—այսինքն, վոր մեր պատրաստածն
անհամեմատ եժան է գործարանայինից։ Խնայողությամբ,
իհարկե, իր հերթին՝ փաստերի միասնության մեջ մի վորոշ
գումարելի լի, վորը և արդարացնում է ռադիոսիրողությամբ
Բայց, այնուամենայնիվ, լեթե ինքնագործ ընդունիչը գործա-
րանայինից փառ լիներ, ապա մենք չեինք ունենա վորակյալ
ռադիոսիրողներ, այլ կունենայինք միայն աղիոլսողներ և ե-
թերային (эфирные) ճանապարհորդներ։

ընդունիչ հրաշալի մի սխեմայով, սակայն վատ մասերից, ապա ընդունիչը վատ կաշխատի, ինչպես նաև վատ կաշխատի այն ընդունիչը, վորը հավաքված է լավագույն մասերից, սակայն վորի սխեման վատ է: Ուստի և նրա համար, վորպեսզի կառուցել լավ ընդունիչ, պետք է իրեն հանգամանորեն պատկերացնել նրա նշանակումը և դրան համապատասխան ել ընտրել այդ նշանակման ծառայող սխեման և շոկել այդ նպատակի համար լավ մասեր:

Յերբ այդ բոլորն արվում է, ապա ասպարեզ է գալիս մի լեբրորդ, իհարկե, իր հերթին նույնպես շատ կարևոր մի խնդիր - ընդունիչի ուղիղ կառուցումը և նրա մասերի ճիշտ միացումը (մոնտաժ) կատարելը: Անճիշտ և անհաջող միացումով կարելի չէ փչացնել նույնիսկ ամենալավագույն սխեմայի աշխատանքը և համարյա փոշնչի հավասարեցնել ամենահրաշալի մասերի բոլոր արժանիքները: Այդպիսով ուրեմն, նրա համար, վորպեսզի ընդունիչը լավ աշխատի, պետք է պահպանել յերեմի հիմնական պայման - սխեմայի ուղիղ միացումը (նպատակահարմար, ձեռնհաս) ընտրությունը, լավագույն մասեր հավաքելը յեմ նրանց ուղիղ միացում կատարելը: Այն ընդունիչը, վոր բավարարում է այդ պայմաններին, անտարակույս լավը կլինի և կարգարացնի իրեն վրա գործադրած աշխատանքն ու միջոցները: Ընդունիչներ կառուցելիս, բոլոր ռադիոտեխնիկների անհաջողությունները միշտ և ամեն գեպքում հետևանք են այն պատճառների, վոր սխեման բավարար ուղադրությանը չէ ընտրված, լավ չեն մասերը և կամ նրանց միացումներն անբավարար են: Սխեմայի ընտրությանը նվիրված հատուկ գրքեր շատ կան - անհրաժեշտ լրացումներ միշտ ել նրանցից կարելի չէ վերցնել, - իսկ այս բրոշյուրում քննության են առնվում այն հարցերը, վորոնք կապված են ընդունիչի դետալների ընտրության և նրա մոնտաժի խնդիրների հետ:

Կ Ո Ճ Ե Ր Ը

Կոճերը (катушки) հանդիսանում են ընդունիչի դետալների մեջ ամենակապականներից մեկը: Ընդունիչի աշխատանքն

ուղակի կախման մեջ է գտնվում կոճերի հատկություններից: Շատ և շատ ընդունիչներ մեջ, ինչպես, որինակ, զեդեկտորային ընդունիչներում - կոճը հանդիսանում է հիմնական և համարյա միակ դետալը, ուստի և կոճերի վորակի վրա հատկապես հարկավոր է խիստ ուշադրություն դարձնել:

ՀԱՂՈՐԴԻՉԻ ՀԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Ընդունիչի կոճերով անցնում է ելեկտրական հոսանքը: Կոճի հաղորդիչ լարերն (провода) այդ հոսանքի համար առաջնում են վորոշ դիմադրություն: Այդ դիմադրությունը հաղթահարելու համար, ծախսվում է վորոշ քանակի էներգիա, վորը համեմատական է դիմադրության մեծությանը: Եներգիայի այն քանակը, վոր ծախսվում է այդ դիմադրությունը հաղթահարելու համար, ռադիոընդունման գործի տեսակետից անուգուտ տեղն է կորչում: Ընդունման ուժը թուլանում է: Բացի դրանից, մեծ դիմադրություն ունեցող կոճեր լինելու դեպքում ընդունիչն սկսում է վատ հաղորդել: Դրա համար ել պետք է աշխատել, ինչքան կարելի չէ, քիչ էներգիա կորցնել կոճի մեջ: Այդ պատճառով ել պետք է կոճերն ախպես պատրաստել, վոր նրանց դիմադրությունը հնարավորին - չափ քիչ լինի: Լարի դիմադրությունը փոքրացնելու համար ելեկտրոտեխնիկան մեզ ցույց է տալիս յերկու ճանապարհ. — առաջին՝ կոճեր պատրաստելու համար գործածել հաղորդիչներ ախպիսի նյութից (մատերիալից), վորն ամենահնարավոր քիչ դիմադրություն ունի և յերկրորդ՝ մեծացնել հաղորդիչի հաստությունը: Ռադիոտեխնիկան իրենից ավելացնում է նաև կոճեր փաթաթելու ձևը և միջոցը, վորից և կախված է կոճի դիմադրությունը՝ բարձր հաճախականության (частота) հոսանքների նկատմամբ: Մատերիալի ընտրության մասին կարիք չկա կանգ առնելու, քանի վոր գործարաններում պատրաստում են միայն պղնձե հաղորդիչներ, ուստի և ռադիոսխեմայի արամադրության տակ կան միայն հետևյալ գործերը. — հաղորդիչի հաստության ընտրությունը միայն և փաթաթման ձևը: Փոքր քանակի գալարներ (витки) ունեցող կոճերի համար,

որինակ, մինչև 50 գալարը, — պետք է գործադրել՝ ելեկտրական զանգի համար գործածվող հաղորդիչ, կամ այնպիսի հաղորդիչ, վորի տրամագիծը 0,5 — 0,8 միլիմետրի սահմաններից քիչ կողմ չանցնի: 50 — 100 գալարներ ունեցող կոճերի համար՝ 0,5 մ.մ., իսկ 100 — 200 գալարներ ունեցող կոճերի համար՝ 0,4 մ.մ. տրամագծի հաղորդիչ: Իսկ ինչու կոճերը չպետք է փաթաթել, ասենք՝ 2 — 3 միլիմետր հաստությամբ ունեցող հաղորդիչներով: Ամենից առաջ այն պատճառով, վոր այդպիսի կոճերը, նախ՝ շատ թանգ կնատեցին, ձևով կոպիտ (грозозд-кий) վարվելու տեսակետից՝ անհարմար, և բացի այդ, բարձր հաճախականության հոսանքների դեպքում, ընդունող կոճերի համար ամենից քիչ կորուստ ստացվում է հատկապես 0,5 — 0,6 միլիմետրի հաղորդիչ գործածելիս:

Մ Ե Կ Ո Ի Ս Ա Յ Ո Ի Մ

Մեծ նշանակություն ունի հաղորդիչի մեկուսացումը (изоляция):

Ամենից առաջ՝ վատ և վոչ ամուր մեկուսացման դեպքում՝ հնարավոր է նրա արագ փչացումը և դրան հետևող՝ կոճի՝ յերկու կամ մի քանի գալարների կարճ միացումը, մի բան, վոր ուղղակիորեն իջեցնում է կոճի վարակական հատկությունները: Այդ տեսակետից շատ վատ են по մարկայի հաղորդիչները, վորոք ունեն միաշար (одинарная) փաթաթվածք:

Բացի անմիջականորեն կարճ միացումից, բարակ և վատ մեկուսիչի վրայից հնարավոր է հոսանքի, այսպես ասած, դուրս հոսելը (утечка), վոր, իհարկե, դարձյալ վատացնում է կոճի աշխատանքը: Բայց չափազանց բարակ մեկուսիչը վտանգավոր է վոչ միայն այն տեսակետից, վոր հոսանքը մեկուսիչ շերտից դուրս է սահում: Կոճերով արագորեն հոսում են բարձր հաճախականության փոփոխակի հոսանքներ: Այդ հոսանքներն ոժտված են այն հատկությամբ, վոր համեմատորեն հեշտությամբ են անցնում ունակության (емкость) միջով, իսկ յերկու՝ իրար կողք ընկած հաղորդիչների մեջ միշտ ել կա մի վորոշ

ունակություն (емкость) վոր և ստեղծում է հոսանքի դուրս գալու համար վորոշ ճանապարհ: Ուստի և կարևոր է, վոր յերկու հարևան հաղորդիչների մետաղյա յերակները (жины) զստախորվեն իրարից հեռու, — դրանով նրանց միջի ունակությունը կփոքրանա, հետևապես կփոքրանա և հոսանքի անցնելը, (утечка) այդ տարածությունից: Այստեղից հետևում է, վոր չպետք է յերբե և վերցնել բարակ մեկուսիչ ունեցող հաղորդիչ: Ամենից բարակ մեկուսիչն ունի եմալյա հաղորդիչը և այն հաղորդիչները, վորոնք ունեն միաշար մետաքսյա և նույնպես միաշար թղթի մեկուսացում: Կոճեր փաթաթելու համար, վերոհիշյալ հաղորդիչները գործածելուց պետք է աշխատել միշտ ձեռնպահ մնալ: Ամենալավ հաղորդիչներից մեկը հանդիսանում է կրկնակի (двойной) թղթյա մեկուսիչ ունեցող հաղորդիչը (ПБД): Կրկնակի մետաքսյա մեկուսացում ունեցող հաղորդիչը (ПШД) լավ է այն կողմով, վոր նրա մեկուսիչն ափելի ամուր է, բայց մետաքսյա մեկուսիչն ափելի բարակ է թղթի մեկուսիչից, դրա համար ել, ունակային հոսումների (емкостные утечки) տեսակետից մետաքսյա հաղորդիչները զիջում են թղթի մեկուսիչ ունեցող հաղորդիչներին: Բացի այդ, նույնիսկ հավասար հաստությամբ ունենալու դեպքում, ունակային հոսումը մետաքսի միջից ափելի շատ տեղի կունենա, քան թղթից, այնքան, վորքան մետաքսի ղիելեկտրական հարստությունն ափելի շատ է, քան թղթինը:

Յեղ այդպես, ամենից հարմար մեկուսիչը կլինի կրկնակի թղթյա մեկուսում ունեցող հաղորդիչը: Բայց դրանով զեռ շի սպառվում մեկուսիչի վերաբերող հարցը: Ինչպես թուղթը, նույնպես և մասամբ մետաքսը, ոժտված են հիգրոսկոպիկ հատկությամբ — ողից խոնավություն ծծելու հատկությամբ: Այդ հատկությունն առանձնապես հատուկ կերպով է հանդես գալիս, այն ժամանակ, յերբ մենք, որինակ, հաղորդիչը ցրտից տանում ենք տաք սենյակը: Այդ դեպքում կոճերի հաղորդիչներն զգալի կերպով «թրջվում» են, իսկ կոճերն ել հրաժարվում են աշխատելուց և կամ վատ են աշխատում մինչ այն ժա-

մանակ, քանի դեռ չեն չորացել, վորովհետև չի միջոցով, վորով ծծվում է մեկուսիչը, առանձին է հոսանքի գույնը սահելու պրոցես: Վորպեսզի խուսափել հաղորդիչի թլվելուց, հաղորդիչը պետք է փաթաթելուց առաջ պարաֆինով սրբել և դրանից հետո ել շորով մաքրել, վորպեսզի նա վերջում ծածկված լինի պարաֆինի համառարած՝ բարակ շերտով: Կտրելի չե նույնպես հաղորդիչը փաթաթելուց առաջ—ընկղմել այն շերտակի վաննայի մեջ. բայց այդ ուղիով սիրողի խղճուկ պայմաններում հեշտ չե կանաթել, ուստի և մնում է մեզ դերագրանել առաջին միջոցը:

Մենք այստեղ բերում ենք մի շատ ոգտակար աղյուսակ՝ լարերի տարբեր տեսակների տվյալների մասին, վորոնք մեզ պետք կզան կոճերի և տրանսֆորմատորների հնարավոր հաշվումներ, թամանակ:

Տվյալ քաշերը և մեկուսիչները մի քանի լարերի տրամագծերը, ինչպես նաև նրանց ղեմադրություն սեծությունները, լրերի (շուրթերի) վոչ միատեսակ լինելու պատճառով, — պետք է հաշվի առնել մ. տավար իմաստով:

Իրականության մեջ սխալը համարում է մինչև 30—40 % ինարկե, լերկու ուղղությունը ել:

Այն մի հնարավոր հաշվումների դեպքում է, զի ավորապես խանութներում վորոշակի քանակությամբ հաղորդիչ գնելիս (քանակը համարյա բոլոր դեպքերում նրա լերկարությունը ենք հաշվում), պետք է ինկատի առնել այն հանգամանքը, վոր մեկուսիչը հաղորդիչի քաշը մեծացնում է 1 % ից (մերկ պղնձի քաշի հարաբերությունը) մինչև 50 տոկոսը: Համեմատաբար, քաշի ավելի քիչ ավելացում է տալիս, եմալե մեկուսիչը, հետո արգեն գալիս են ПШО, ПШД, ПБО, և, վերջապես, ПБД հաղորդիչները: Համեմատաբար մեծ կտրվածք (կամ տրամագիծ) ունեցող հաղորդիչների համար (սկսած 0,5 մ.մ.-ից և ավելի բարձր), նրանց մեկուսիչը կազմում է քաշի 1—5 % ը: Ավելի բարակ հաղորդիչների համար, այն տոկոսը (քաշի), վոր կազմում է մեկուսիչը, բարձրանում է, հասնելով մինչև 10—15 % ի և, վերջապես, ամենաբարակ հաղորդիչների մեջ մեկուսիչի քաշը հասնում է մերկ լարի ընդհանուր քաշը 30—50 %-ին:

Ժուռնալներում և զրքերում, պահպան հոստորակցիտներ նկարագրելու դեպքում գույց տրված՝ պահանջի հաղորդիչների քանակը (քաշը), վորը պետք է այս կամ այն կոճը փաթաթելու համար, սովորաբար տալիս են մեկուսացրած լարի համար, — այն ինկատի ունենալով: Մինչդեռ բոլոր հաշվումների և նկարագրումների, ժամանակ, հաղորդիչի տրամագիծը տրվում է առանց մեկուսիչի (յեթե միայն չկան այդ առթիվ տրված հատուկ հիշատակումներ): Յեթե մենք հաշվելու լինենք, թե վերաբերի տարածություն կրոնի հայտ կամ այն քանակի հաղորդիչը, ապա պետք է հաշի առնել հաղորդիչի տրամագիծը մեկուսիչի հետ միասին և ուղղում մտցնել փաթաթվածքի վոչ թիտ դատալորություն մեջ (վոչ խիտ փաթաթվածք լինելու շնորհիվ կոճը կարող է մեկ ու կես անգամ մեծ ծավալ ունենալ):

ՓԱԹԱԹԵ ՈՒ ՄԻՋՈՑԸ, ՆՐԱ ՁԵՎԸ

Ներկայումս շատ լեղանակներ կան կոճերի և՛ փաթաթվածքի և՛ ձևի համար: Ամենից առաջ գոյություն ունեն գլանաձև կոճեր — միաշերտ և բազմաշերտ: Միաշերտ և բազմաշերտ կոճերը փաթաթում են գլանաձև, ովալաձև և այլ կարկանների վրա: Բացի այդ, կան նաև քթոցային (корзиночные) կոճեր, լրագրային (газетные), խարոխային (сотовые) և շատ ուրիշ տեսակները: Իրանք բոլորն ալտեղ միտք չկա թվարկելու: Կոճերի բոլոր տեսակների մեջ լերաշխափորելի են միաշերտ գլանաձև կոճերը և հասարակ խարոխայինները: Մյուս կոճեր պատրաստելու տեսակետից ավելի դժվար են և հաճախ ել վառն են լինում գլանաձև ու խարոխային կոճերից, — համեմատի դեպք, վերջիններից լավը չեն: Գլանաձև կոճերը կարելի չե գործածել այն դեպքերում, լերը կոճի գալարների թիվը մեծ չե, որինակ՝ լերը 50 գալար է, վորահետև մեծ քանակի գալարներ ունեցող գլանաձև կոճերը շատ կուպիտ դուրս կգան:

ՏՐՎԱԾ ՀԱՂՈՐԴԻԶՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿԸ

Մերկ պղնձի պահպանման ժամկետը ամիսներով	ՏՐԱՄԱԳԻՇԸ ՄԵԿՈՒՄԻՉՈՎ						Պղնձի համաժան մակերևույթի վրա թափվող մեկ մմ-ը	Մետրի դիմադրությունը ուժերով	100 մետր մետր լուծվող պղնձի քաշը
	Ե մ ա լ	Մետր (0,01 մմ-ի հարմար) միլիմետր ՍՊՈ	Սեմիմետր (0,01 մմ-ի հարմար) միլիմետր ՍՊՈ	Մետր (0,01 մմ-ի հարմար) միլիմետր ՍՊՈ	Սեմիմետր (0,01 մմ-ի հարմար) միլիմետր ՍՊՈ	Սեմիմետր (0,01 մմ-ի հարմար) միլիմետր ՍՊՈ			
0,05	0,051	—	—	—	—	—	0,002	8,14	2
0,10	0,110	0,15	0,20	0,30	—	—	0,008	2,04	7
0,15	0,151	0,20	0,25	0,35	0,50	—	0,018	0,31	17
0,20	0,210	0,25	0,30	0,40	0,55	—	0,031	0,51	28
0,25	0,260	0,30	0,35	0,45	0,60	—	0,049	0,33	44
0,30	0,315	0,35	0,40	0,50	0,65	—	0,071	0,226	63
0,35	0,365	0,40	0,45	0,55	0,70	—	0,096	0,166	85
0,40	0,415	0,45	0,50	0,60	0,75	—	0,126	0,127	112
0,45	0,465	0,50	0,55	0,65	0,80	—	0,159	0,101	141
0,50	0,515	0,55	0,60	0,70	0,85	—	0,196	0,081	174
0,55	0,565	0,60	0,65	0,75	0,90	—	0,238	0,067	211
0,60	0,615	0,65	0,70	0,80	0,95	—	0,283	0,057	251
0,65	0,665	0,70	0,75	0,85	1,00	—	0,332	0,042	295
0,70	0,715	0,75	0,80	0,90	1,05	—	0,385	0,036	342
0,75	0,765	0,80	0,85	0,95	1,10	—	0,442	0,036	390
0,80	0,82	0,85	0,90	1,00	1,10	—	0,503	0,0318	450
0,85	0,87	0,90	0,95	1,05	1,15	—	0,567	0,0282	509
0,90	0,92	0,95	1,00	1,10	1,20	—	0,636	0,0251	570
0,95	0,97	1,00	1,05	1,15	1,25	—	0,709	0,0226	630
1,00	1,02	1,05	1,10	1,20	1,30	—	0,785	0,0204	700
1,1	1,12	1,15	1,20	1,30	1,40	—	0,950	0,0168	840
1,2	1,22	1,25	1,30	1,40	1,50	—	1,131	0,0141	1000
1,3	1,32	1,35	1,40	1,50	1,60	—	1,327	0,0121	1180
1,4	1,42	1,45	1,50	1,60	1,70	—	1,539	0,0104	1,370
1,5	1,52	1,55	1,60	1,70	1,80	—	1,767	0,0091	1,560
1,6	1,62	1,65	1,70	1,80	1,90	—	2,00	0,0080	1,780
1,7	1,72	1,75	1,80	1,90	2,00	—	2,27	0,0071	2,010
1,8	1,82	1,85	1,90	2,00	2,10	—	2,54	0,0063	2,260
1,9	1,92	1,95	2,00	2,10	2,20	—	2,84	0,0056	2,510
2,0	2,02	2,05	2,10	2,20	2,30	—	3,14	0,0051	2,700

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ.—Տվյալ քաշերը և լարի տրամագծերը (մեկուսիչով), ինչպես նաև նրանց դիմադրությունը մեծագույնը,

լրերի մոտ միասնականության պատճառով պետք է հաշվել մոտավորապես: Իրականում սխալը հասնում է 20—30 %-ին լարի ու կողմով ել: Բոլոր հաշվումներին, ինչպես նաև խառնվելիք վերջապի քանակությամբ հաղորդիչ գնելու ժամանակ, պետք է հաշվի առնել, վորը մեկուսիչը հաղորդիչի քաշը մեծացնում է 1 %-ից (մերկ պղնձի հաղորդիչի քաշը) մինչև 50 %: Քաշի բիշ տվելուցում է տալիս եմպի մեկուսիչը, հետո գալիս են ՍՊՈ, ՍՊՈ, ՍՊՈ, և, վերջապես՝ ՍՊՈ հաղորդիչների մեկուսիչները: Համեմատաբար մեծ կտրվածքի հաղորդիչների համար (0,5 մ.մ. և բարձր) մեկուսիչը կազմում է 1-ից 5 %-ը: Սակայն բարակ հաղորդիչների համար, այդ %-ը հասնում է 10—15-ի և, վերջապես, ամենաբարակ հաղորդիչների համար մեկուսիչի քաշը կազմում է մերկ հաղորդիչի 30-ից 50 %-ը: Չանազան կոնստրուկցիաների նկարագրություն (գրքերում և ժուրնալներում) դեպքում հաղորդիչի քանակը (քաշը), վոր պետք է այս կամ այն կոնք փաթեթավորելու համար, տրվում է մեկուսացրած լարի համար: Իսկ բոլոր հաշվումներին ժամանակ հաղորդիչի տրամագիծը տրվում է առանց մեկուսիչի (յեթե չկա այդ մասին հատուկ հիշատակում): Սեթե մենք հաշվելու լինենք, թե ինչպիսի տարածություն կընեն հաղորդիչի այս կամ այն քանակը, ապա պետք է հաշվի առնեն հաղորդիչի տրամագիծը մեկուսիչով և ուղղումներ մտցնենք փաթեթավորվող վոր խիտ դրություն մեջ՝ վոր խիտ փաթեթավորման մեկ ու կես անգամ ավելի մեծ ծավալ է բռնում):

Սյուպերի մեծ քանակի գալարներ ունեցող կոնքեր գործածելը թույլատրվում է միայն դեգեկտորային ընդունիչների մեջ, վորոնցում ուրիշ դետալները բացակայում են: Իսկ բոլոր մյուս դեպքերում կարելի չէ ոգավել խաբսխային (СОТОВЫЕ) կոնքերով, վորոնք նույնիսկ 200—300 գալարներ ունենալու դեպքում ևս բավականին պորտատիվ (պարզ ու հասարակ) են ստացվում: Պարզ է՝ մեր ասածը չպետք է հասկանալ այնպես, վոր մինչև 50 գալարի դեպքում պետք է գործածել անպայման գլանաձև կոնքեր, իսկ 50-ից շատ լինելու դեպքում՝ խաբսխաձև: Խաբսխային կոնքերը շատ լավ են աշխատում նաև վորք քանակի գալարներ ունենալու դեպքում:

Փաթվածքի համար ընդունվելիք մրամագիծը շատ և շատ տարբեր չափերի կարող է լինել, բայց պլակատիկան արդեն մշակել և հիմնական, բոլոր դեպքերի համար ամենից հարմար չափը, այն է, 5—6 սանտիմետր։ — հաշվելով փաթվածքի ներքին տրամագծից։ Այդ չափը պետքական է ինչպես խառնուրդին, նույնպես և միաշերտային և ուրիշ ձևի փաթվածքների համար։

Առհասարակ պետք է հիշել, վոր ընդունելը կաշխատի տվեն մի ձևի և չափի կոճ լինելու դեպքումն էլ, միայն թե նրա ինքնիշխան հնարավորությունն տար լարվելու (настроить)։

ՀԵՐԹԱՓՈԽ ԿԱՏ ԾԱՅՐԵՐԸ ԴՈՒՐԾ ԲԵՐՎԱԾ ԿՈՃԵՐԸ

Աշխատելու տեսակետից հերթափոխ (сменные) և ծայրերը գույն բերված (с отводами) կոճերը կարող են հաշվել մասնատակ և նրանց տարբերությունը հանդիսանում է միայն նրանց դիտարկման չափերի և նրանց հետ վարվելու հարմարություն մեջ։ Չի կարելի անսահման դիտարկման ունեցող դուրծայրերով կոճ կառուցել, մինչդեռ ընդունելի հետ վարվելը յերբ վերջինս աշխատում է դրսի ծայրերով կոճի վրա շատ հասարակ և պարզ։ Հերթափոխ կոճերը թույլ են տալիս կտրելու շատ մեծ դիտարկման, բայց այդ դեպքում էլ շատ է բարդանում ընդունելի հետ վարվել, ու գործը։ Ուստի և, յեթե ընդունելը հաշված է վորոշ դիտարկման (որինպէ՛ մեզ մոտ տարածված է 300-ից մինչև 1,800 մետրը), ապա կարելի չէ մեծ հաջողությամբ գործածել դուրս քերված ծայրերով կոճեր։ Այդ բանը և շատ հեշտ դուրս կգա և հեծան կնստի։ Իսկ յ թե հարկավոր է, վոր ընդունելը վերջներ (հատեր) շատ մեծ դիտարկման, վորնա կարողանար ալիքներ ընդունել և 150 մետրի վրա, և 3,000 և, կարող է պատահել, մինչև 10,000, ապա, իհարկե, մեզ անում է ոգավել հերթափոխ կոճերով։

Ծ Ե Ռ Յ Ա Ն Ծ Ա Յ Ր Ե Ր Ը

Դրսի ծայրերով կոճերի վիտարկման սահմանափակ վիճակը բացատրվում է այն հանգամանքով, վոր փոքր թվի կոճի գալար-

ների կոնսուրում, կոճի մնացած ազատ մասն աշխատանքային վերջերքում է ընդունելի աշխատանքի վրա։ Ներգործման այդ պրոցեսն արտահայտվում է յերկու կերպ։ Առհասարակ չափըն արտահայտվում է կոճի, այսպես ասած, «ալիքի» սեփական յերկարություն» մեջ։ Ամեն մի կոճ ունի մի վորոշ ինքն ինդուկցիա և վորոշ չափի սեփական ունակություն, այսինքն՝ հանդիսանում է յուրատեսակ մի տատանվող կոնսուր, վոր ունի վորոշ ալիքի նկատմամբ լարում (настройка)։ Դրսի ծայրերով կոճն աշխատում է նորմալ կերպով միայն իր սեփական ալիքից ալիքի յերկար ալիքներում։ Իրենց սեփական ալիքից ալիքի կարճ ալիքների վրա կոճերը վատ կաշխատեն, յերբեմն նույնիսկ նրանք չեն աշխատում։ Դրանով են բացատրվում հաճախ պատահող այն դեպքերը, վոր հաղորդչն ունի ինչ վոր ալիքի մինիմալ և «լախարդված» յերկարություն, վորից արդեն չի կարելի ներքի իջնել, չնայած այն բանին, վոր համաձայն կ ճի գալարների թվի, վորը միացած է (включен) կոնսուրին, ալիքը պետք է ստացվի ալիքի կարճ։ Այդ յերեվուկից խուսափելուց հետո, յերբեմն, գործադրվում է կոճի խզում (разрыв) վորոշ մի տեղում և կոճի չաշխատող մասի աշխատում (отключение) բայց ալդ բոլ ր դեպքերը մեզ չեն բերում վերոհիշյալ «կոճի ալիքի սեփական յերկարություն» ազդեցության լիկ յիդա իալին։

Կոճի մեռյալ կետի յեկտորդ ֆլասակար գործունեությունը կարմնում է նրանում, վոր կոճի չաշխատող մասի ալիքի սեփական յերկարությունը, նույնիսկ և աշխատող մասից անջատ յետած դեպքում կարող է միատեղվել ընդունվող ալիքի յերկարություն հետ և հանդեռ բերել «ծծող» գործողություն։ Այդ բանի պատճառով ընդունելը դիտարկման վորոշ մասերում չի աշխատի։

Դրսի ծայրերով կոճերի մեռյալ կետի ալդ ֆլասակար ազդեցությունները կարող են հանդես գալ, կրկնում ենք, հաշուարկից ալիքի գալարներ ունեցող կոճերի մոտ, յերբ ալիքները յերկարությունը մոտավորապես 230—260-ի սահմաններում են

ԿՈՇՏ ԿԱՌՈՒՅՎԱԾՔ (ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱ)

Ճառ հաճախ ուղիորդողները պատրաստած կոճերի հետաքվածքները (կոնստրուկցիաները) լինում են ճիշդիվ հետևյալը:

Կոճի կառուցման անհամեմատ փափուկ է, զալստներն իրենց աեղերում խաղում են, մի խոսքով՝ կոճերը հեշտությամբ քանդվում են: Այդպիսի կոճերը չեն կարող լավ աշխատել: Գլխավորապես կոճերը պետք է փաթաթված լինեն ամուրի և կոշտ զլանի վրա, պրեստշյանի և կամ առհասարակ բարակ կարտոնի մի քանի շերտերից ստիճկված, իսկ ինքը՝ փաթաթվածքը պետք է կատարել կիպ (плотно) և ճիշտ, վորպեսզի գալաները գլանի վրա ճանապարհորդության չենեն:

Կոճերը պետք է փաթաթված լինեն շատ նուրբ և ճշտորեն, չպետք է թույլ փաթաթվեն և փաթաթելուց հետո պետք է թելիկներով կարվեն: Դրանից հետո կոճը թե գրգռի և թե ներսից պետք է ընդկրկվի պրեստշյանի ժապավեններից: Առհասարակ բոլոր կոճերի կոնստրուկցիան պետք է լինի շուր (կոշտ) և խիստ ամուրի:

ՀԱԿԱՆԱՐՁ ԿԱՊԻ ԿՈՃ

Միանգամայն առանձին պահանջներն են առաջադրվում հակադարձ կապի կոճին: Այդ կոճը միացվում է անողային շղթային, լամպի ներքին դիմադրությանը հաշորդաբար, վորն ունի 20,000 — 30,000 ոմ: Այդպիսի դիմադրության հետ համեմատելով այն մի քանի ոմերը, վորոնք կարող է տալ սովորական կոճը, վոչ մի նշանակություն չունեն: Ուստի և հակադարձ կապի կոճը կարելի չի փաթաթաթել ինքան կարելի չի փոքր արամագծի հաղորդչից, թող լինի նույնիսկ 0,05 արամագծի հաղորդչից, վորից փաթաթվում են հեռախոսների (տեղեֆոն) ելեկտրոմագնիսների համար արված կոճերը, կամ արանաֆորմատորների լերկորդական (вторичные) գալարները: Այդ հատկապես պետք է լավ հիշեն այն ուղիորդողները, վորոնք գտնելով, վոր իրենց ընդունիչում բացակայում է ընդունման գործը, սկսում են լինթաղել, թե այդ հեռախոսը

է այն պատճառով վոր, նրանք, փոխանակ հակադարձ կապի կոճի համար նկարագրած՝ 0,4 մ.մ. արամագծի ունեցող հաղորդչի, դրել են 0,25 մ.մ. արամագծի հաղորդչի: Հարկավոր է բաշ գիտենալ, վոր ընդունիչը, հակադարձ կապի կոճի հաղորդչի ամեն մի հաստությունն ունենալու դեպքում ել նորմալ կաշխատի Յեկ լեթե կոնստրուկցիաներում լերբեր չի հիշատակվում շատ բարակ հաղորդչի, ապա ալգ միայն այն պատճառով, վոր բարակ հաղորդչից շատ հեշտ է կոտրվում և տուհաւարակ նրա հետ վարվեն՝ ել բավակ անին դժգար է: Աճենից ձեռնառ չե կոճերը պատրաստել՝ լերկշար սեկուսիչ ունեցող հաղորդչից, վորի արամագծը լինի 0,2 — 0,25 մ.մ., ալինքն՝ բավականին բարակ մի հաղորդչից, բայց վոչ հատկապես իմացություն մոտեցում պահանջող, սկզբունքից լերկելով: Ավելի հաստ հաղորդչից, իհարկե, գործերը չի փչացի և հաճախ հերթափոխ կոճեր ունեցող հակադարձ կապի ընդունիչում գնում են նաև այն կոմպլեկտի կոճերը, վորոնք և դրվում են լարման կոճերի համար:

Հակադարձ կապի կոճի մեջ գալաների թիվը, կարող է տատանվել, կախում ունենալով սխեմայից, կապ ունենալով անտեննայի հետ, լամպի ալյալ որինակի (եկվեմալյար) հետ և այլն: Վորպես որենք, ուղիորդողման (радиовещательного) զիապաղոնի կարճալիք սահմանում (участок) գալարների թիվը իջիչ ավելի շատ է, քան լարման կոճի գալարների թիվը: Ավելի լեկար տեղ լինելու դեպքում հակադարձ կապի գալարների թիվը համեմատվում է հակադարձ կապի գալարների հետ: Բայց կարելի չի ոգտադործել և ընդհանուրը (հակադարձ կապի վոչ հերթափոխ կոճ): Ու ինակի համար, լսարսխային կոճը, վոր ունի 50 — 75 գալար (և կամ ինքնինդուկցիայի գծով նրան համապատասխանող փոքր չափի, բայց մեծ բանակի գալարներ ունեցող կոճերը), կարող են անփոխ (бессмено) սպասարկել ընդունիչի ամբողջ դիապազոնին: Սակայն, անողային փի փոքր լարման և վատ անտեննայի դեպքում գնեերացիան ալիքների հեռավոր սահմանի վրա ուժեղ կերպով կսկսի դժվարանալ:

78-251



Հերթափոխ կոճեր ունեցող ընդունիչի վրա աշխատելու դեպքում հակադարձ կապի կոճի մեծութունն ընտրելը շատ հարմար է: Ցանկալի է (հերթափոխ կոճերի դեպքում) հակադարձ կապի կոճն ընտրել տվյալ դիապազոնի համար մեծ թվով, այնպես վոր ընդունիչն ունի գեներացիա անել (генерировать) միմյանցից հեռու դրված կոճերով: Այդ բանը հեշտացնում է ավելի սահուն (плавный) մոտեցմանը՝ հանդեպ գեներացիան, ինչպես նաև խանգարում է փաստիկար ունակալին հակադարձ կապի առաջացման (վորը պատահում է իրար մոտ խտացում կոճերի դեպքում): Շատ լավ արդյունքներ է տալիս վարիոկուպլերում հակադարձ կապի հարատև (постоянная) կոճը, վոր հաճախ է ոգտագործվում «Радиолюбитель» ժուրնալի կոնստրուկցիաներում և վորը մանրամասնորեն նկարագրված է Կուբարկինի՝ «одналамповый регенератор» («Միալամպ ուղեկներատոր») զրբում:

Հակադարձ կապի կոճը՝ չի կարելի փաթաթել շատ բարակ մեկուսիչ ունեցող հաղորդիչից, քանի վոր այդ դեպքում հակադարձ կապի կոճը կունենա ներքին մեծ ունակութուն, Կարող է ստացվել լարված (настроенный) կոնտուր, վոր կսկսի խանգարել ընդունիչի նորմալ աշխատանքը՝ նրա ամենակարճ բնագավառում:

Հակադարձ կապի հաջող աշխատանքի զլխավոր գրավականը հեռավոր ընդունման համար հանդիսանում է՝ հանդեպ ուղեկներացիան սահուն մոտեցում ունենալը և հակադարձ կապի կոճի վերներալին պտույտը (вращение):

Փ Ո Փ Ո խ Ա Կ Ի Կ Ո Ն Դ Ե Ն Ս Ա Տ Ո Ր Ն Ե Ր ԸՆԴՈՒՆԻՉԻ «ՄԻՐՏԸ»

Փոփոխակի կոնդենսատորները կոճերի հետ միասին հանդիսանում են ընդունիչի «սիրտ»: Կարող է պատահել նույնիսկ օխալ չլինել, իթե ասենք, վոր կոնդենսատորն ավելի եյական մաս է հանդիսանում, քան կոճը, այնքան, վորքան շատ ընդունիչների մեջ լարվածքը կատարվում է փոփոխակի կոնդենսատորների օգնությամբ և այն բանից, թե վորքան լավ է այդ

դեպքը և ինչքան հոստու չե նա աշխատում, կախված են, նաև վերջին հաշվով այն արդյունքները, վորոնք պետք է տա ընդունիչը:

ՈՂԱՅԻՆ ՅԵՎ ՎՈՉ ՈՂԱՅԻՆ

Դիվիկտրիկի տեսակետից, վորը գտնվում է կոնդենսատորի շարժական և անշարժ թ թեղների միջև, կարծիք չի կարող լինել, — իթե ռադիոսիրտն ուզում է վորպեսզի իր ընդունիչը լավ աշխատի, ապա նա պետք է ընդունիչի մեջ դնի միայն ողային կոնդենսատորներ: Մինչև աժմա ել դեռ հաճախ՝ վաճառքում պատահող — փոփոխակի կոնդենսատորների գործադրումից, սովորաբար ցելլուլրիդան կցումներից (прокладки) թիթեղների միջև՝ պետք է վճակահանապես հրաժարվել:

Մ Ե Կ Ո Ի Ս Ի Չ Ը

Շարժական թիթեղների սխտեմը (համակարգությունը) պետք է լավ մեկուսացրած լինի անշարժներից: Համապատասխան կոնդենսատորներն հանդիսանում են նրանք, վորոնցում վորպես մեկուսիչ գործադրվում է երանիտը: Ֆիբրային մեկուսիչ ունեցող կոնդենսատորներ գնելուց պետք է ձեռնպահ մնալ, վորովհետե՛ ֆիբրան ոժտված է հիգրոսկոպիկ հատկությամբ և հեշտությամբ է խոնավանում:

ՄԵԽԱՆԿԱԿԱՆ ԱՄՐՈՒԹՅՈՒՆԸ

Փոփոխակի կոնդենսատորի համար արտակարգ կարևոր (կարելի է հաշվել ամենազլխավորը (վորակական հատկանիշ է հանդիսանում մեքանիկական ամրությունը: Կոնդենսատորի ամրող կոնստրուկցիան անհրաժեշտաբար պետք է լինի կոշտ և ամուր: Վաճառքի մեջ պատահում են կոնդենսատորներ, վորոնք պատրաստված են մի կերպ, շատ բարակ և շուտ փթող թիթեղներից, Կոնդենսատորների հիմը (станина) ամրացված է լինում շատ վատ: Թվում է թե բավական է փչել ա, դ կոնդենսատորներին և նա վայրկենապես ցրվում է կա՛մ կորանում: Այդպիսի կոնդենսատորներն անպետք են: Համենայն դեպս, առ-

դիտարկելի չզերի համար այդպիսի կոնդենսատորները մի քանի անգամ թանկ կհասնի իրենց արժեքից:

Կոնստրուկցիայի ընդհանուր ամրոթյունից բացի պետք է ուշադրություն դարձնել առանցքաշրջաններին (ВТУЛКИ) ապահովության վրա, վրոնց մեջ պատվում է կոնդենսատորի առանցքը: Առանցքը և վոշ մի դեպքում չափար է իր տեղում խառա: Այդ տեսակետից վառն են այն կոնդենսատորները, վորոնք ունեն երանիպա և կամ առհասարակ ճեկուսիչից պատրաստած առանցքաշրջան: Յեժե առանցքն այդպիսի կոնդենսատորների մեջ գնելու ժամանակ չի ել իտպում, ապա նա, հաժանաբար կրապա վորոշ ժամանակ աշխատելուց հետո: Լավ կոնդենսատորների մեջ առանցքաշրջանները պետք է իրենն մետաղից: Առանցքի համար վառ առանցքաշրջանը և հենարանը (УПОР) հանգեցնում են այն բանին, վոր կոնդենսատորի ունակութունը կսկսի փոփոխվել բավականին լայն սահմաններում, յերբ նույնիսկ թվեն կերպով սեղմվող լարվածքի կաթին (ручку):

Թ Ե Թ Ե Վ Ը Ն Թ Ա Ց Ք

Կոնդենսատորները պետք է թեթև ընթաց (легкий ход) ունենան, այսինքն, պետք է պտտվեն նոյնիսկ այն դեպքում, յերբ կոնդենսատորը գործում են պտտեցնել վոշ թե բանակութով, ալ անիշակաճորեն, մասներով առանցքից բռնելով: Ծանր (ամուր) պտտվող կոնդենսատորը վառ կսկսի աշխատել:

Բայց, իհարկե, նույնպես և պտտման անշափ թեթևութունն ել է իր հերթին փաստկար: Իսկ այդպիսի թեթևութուն ասելով մենք հասկանում ենք այնպիսի գրութուն, յերբ կոնդենսատորի շարժական թիթեղներն իջնում են իրանց բաշի ազդեցութունից: Լավ կոնդենսատորում թիթեղները թեթև են պտտվում, բայց միևնույն ժամանակ մնում են անշարժ կոնդենսատորի ունեն մի դիպքի (իճակի) ժամանակ:

Ա Մ Բ Ա Ց Մ Ա Ն Ձ Ե Վ Ե Բ Ը

Սովորաբար կոնդենսատորներն ամրացվում են բնդունիչի հիմքի տախտակին (панель) կամ մի քանի,—ամենից հաճախ

յերբ,—պտտակների սղնուխյամբ և կամ մի մարդաստակի (рейка) սղնուխյամբ: Կոնդենսատորի ամրացման համար վերջին ձևն ամենից ղեքադասելին է, վորովհետև այդ ձևն իրադորժվում է զգալիորեն հեշտ ու ալաղ և թույլ է դալիս առանց դժվարության կոնդենսատորի երթափոխում (смена) կատարել: Սակայն մեր ուղիորդական բավականին աղքատ է և քրտության ազատությանը տվյալ դեպքում մեղ թույլ չի ապրի:

ՔՄՎՈՒՄԸ (ԿՈՆՏՐԱԿՏ)

Լավագույն (ըստ ելության նորմալ տիպի) կոնդենսատորները հաշվում են այն կոնդենսատորները, վրոնցում վերացված է ուժեղ (трусийся) քսվումը՝ (կոնտրակտ) առանցքի և դուրս հանած սեղմիչի միջև:

Սովորաբար այդ նպատակի համար ընդունվում է առանցքի միացումը՝ դուրս բերված սեղմիչի, կամ այն մետաղյա թիթեղի հետ, վորի վրա ալդ սեղմիչն ամրացրած է ճկուն հողորդիչի կամ սպիրալաճկ գոյանակի միջոցով: Այն կոնդենսատորները, վորոնք ունեն ուժեղ քսվում (կոնտակտ), վառն են, քանի վոր, առանցքի մի թեթև խաղալուց (разбалтывание) կոնդենսատորը կսկսի շարժվել, այսինքն՝ երա պրասման դեպքում լափողում կսվեն տնհան շառաչներ, վորոնք և դժվարացնում են լարումը:

Թ Ի Թ Ե Ղ Ն Ե Բ Ի Ձ Ե Վ Ը

Ներկայումս մեր արդյունաբերութունը և մասամբ ել անայնապորժները յերեք տիպի կոնդենսատորներ են որատրատում,— ուղղաունակային (прямоемкостные), վորոնք ունեն ունակության ուղղագիծ բնութագիրը (խարակտերիստիկա), զրամբ կիսաշրջան թիթեղներ են,— ուղղահաճախային (прямочастотные), վորոնք փակ (замкнутый) կոնտուրում ապրի ևն խառախուսների ուղղագիծ խարակտերիստիկա և ուղղալիքային, վորոնք նույն ալդ պայմաններում ապրի ևն ալիքների ուղղագիծ խարակտերիստիկա: Ընդունիչները փակ (замкнутый) կոնտուրների համար ձեռնառու յե գործածել ուղղահաճա-

խալին կամ ուղղախալին կոնդենսատորներ, վորոնք տալիս են կալանների համեմատաբար ավելի հաժախաբար քաշխում կոր աստիճանացույցի (шкала) վրա, վորը հեշտացնում է լարումը, Բաց կոնտուրների մեջ, այսինքն այնպիսի կոնտուրների, վորոնց միջևում են անտեմնան և հողը, — նույնպես գերադասելի չեն ուղղահաճախային կամ ուղղալիքային կոնդենսատորները, բայց կարող են գործածվել նաև ուղղառնակային կոնդենսատորներ, քանի վոր անտեմնայի և հողի միացումը, միևնույն է, խախտում է կոնտուրի բնութագրի ուղղագիծն ամեն մի կոնդենսատորի գեպըում: Թիթեղների ուղղահաճախային կամ ուղղալիքային ձևը նույնպես ոգնում է և լարման հեշտությունը գիապագոնի սկզբում (չնորհիվ ունակության դանդաղ փոփոխման), բայց պետք է հիշել, վոր այդ գործում լավ վերերը մի քանի անգամ ավելի արդյունավետ հետևանք կտա:

ԵԿՐԱՆԱՑՈՒՄ (ЭКРАНИРОВАНИЕ)

Վորպես գործնականում ոգտագործվող կոնդենսատոր, ամենից հարմար հանդիսանում է այն կոնդենսատորը, վորի մոտ առջևի տախտակը, վորը մոնտաժի դեպքում դրվում է (прилагается) ընդունիչի տախտակին (панель), պատրաստված է մետաղից և միացած է ելեկտրականորեն՝ Թիթեղների շարժման համակարգության հետ: Այդ դեպքում, կոնդենսատորի ուղիղ միացման (включение) ժամանակ, առջևի այդ մետաղյա տախտակը ծառայում է վորպես եկրան, վորը փոքրացնում, կամ վոչնչի չե հավասարեցնում ձեռքերի ունակային ազդեցությունը և հաճախ անգեպք դարձնում հատուկ եկրանների գործածումը: Կոնդենսատորի միացնելու կանոնը — նրա առջևի տախտակի եկրանացման գործողության ոգտագործման համար, ալիսին է — կոնդենսատորը պետք է միացվի այնպես, վորպեսզի նրա անշարժ Թիթեղները միշտ միացրած մնան լամպի ցանցի հետ: Այսպիսով, բաց կոնտուրներում յերկար ալիքների սխեմայի դեպքում, շարժական Թիթեղները պետք է միացվեն հողի հետ, իսկ կարճ ալիքների սխեմայի դեպքում — անտեմնայի հետ, ցանցային կոնտուրների մեջ (լամպերի միջև տրանսֆորմատորային

կապի դեպքում) շարժական Թիթեղները միացվում են լամպի շիկացման (накал) հետ, իսկ անողային կոնտուրների մեջ, [օլարված (настроенный) անող] — շարժական Թիթեղները միացվում են անողային մարտկոցի հետ: Կոնդենսատորների միացման ճիշտ ալիքային ձև պետք է պահպանել նաև այն կոնդենսատորների դեպքում, վորոնք չունեն առջևի մետաղյա տախտակ, բայց այդ դեպքում ձեռքերի ունակային ազդեցությունն այնուամենայնիվ նկատելի կդառնա: Ուստի և կոնդենսատորների ընտրության դեպքում նախապատվություն պետք է տրվի նրանց, վորոնց մոտ առջևի տախտակը մետաղից է:

Վ Ե Ռ Ն Ե Ր Ն Ե Ր Ը

Մեր ռադիոսիրողները, չգիտես ինչու, մինչև այժմ ել լրիվ կերպով չեն կարողանում գնահատել վեռներների ներկայությունն անհրաժեշտությունը կոնդենսատորների մոտ, չնայած այն բանին, վոր լավ վեռները մի քանի (և այն էլ շատ) անգամ բարելավում է ընդունիչի աշխատանքը: Առանց վեռների — կոնդենսատորներ կարող են գործածվել դեղեկտորային ընդունիչների մեջ, ինչպես նաև լամպային ընդունիչների մեջ, վորոնք նշանակվում են բացառապես տեղական կայաններն ընդունելու համար: Իսկ լիթե ընդունիչի վրա պատրաստվում են ընդունել հեռավոր կայանները, ապա վեռները միանգամայն անհրաժեշտ է:

Կոնդենսատորների մոտ վեռներները բաժանվում են ելեկտրական և մեխանիկական վեռներների: Ելեկտրական վեռներները (լրացուցիչ Թիթեղ) լավ են աշխատում, Թույլատրում են շատ սահուն (плавное) կերպով ունակության փոփոխումը, բայց նրանք անհարմար են նրանով, վոր լրացուցիչ Թիթեղի գոյությունը Թույլ չի տալիս ճշտությունը աստիճանավորել (проградуировать) այն կոնտուրը, վորի մեջ գտնվում է կոնդենսատորը: Դրա համար ել ելեկտրական վեռներներ ունեցող կոնդենսատորները հարկավոր է գործածել միայն բաց կոնտուրների մեջ, քանի վոր անտեմնայի և հողի՝ այդ կոնտուրներին միանալուց հետո նրանց ճշտիվ աստիճանավորումը, միևնույն է, հնարավոր չէ:

Մեթոնիկական վեռներնեքը բաղկացած են մի հարմարաթյունից, վորը գանդաղեցնում է շարժական թիթեղների պրաման ամբողջ համակարգությունը։ Սյդ նպատակին սովորաբար հասնում են փոքրիկ բռնակոթի հաղորդման ճանապարհով, մի շարք տասանանիւների (зубчатки) կամ ֆրիկցիոն միացմաների (сцепление) (կոնսենսատորի առանցքին) օգնությամբ։

Լավ վեռներն ամենից առաջ ըն լծադրվում են անոգուա ընթացքի (мертвый ход) բացակայությամբ։ Վերահիշյալ հակացողության տակ մենք հավանում ենք վեռների ամպիտի հասկոթյունը, յերբ իր վեռները բռնակոթի պտտման դեպքում, նա մի վորոշ ժամանակ պտտվում է անոգուա (вхолостую) չառաջանելով կոնզենսատորի շարժական համակարգության համապատասխան փոփոխում։ Լավ վեռները չպետք է ունենա անոգուա ընթացք։ Բացի այդ, վեռները պետք է ունենա թեթև ընթացք (легкий ход) այսինքն, վեռներային բռնակոթի պատվար է նրա հետ կապված շարժական թիթեղների պտտումը պետք է կատարվեն թեթևությամբ և սահուն կերպով, առանց ուժեղացման և ցնցումների։

Վեռներնեք ունեցող ամենայալ կոնզենսատորներն հանդիսանում են այն կոնզենսատորները, վորոնք ունեն և սովորական աչաղ պտտում և դանդաղ վեռներային (այդ տիպի կոնզենսատորներն արդեն վերջերս սկսել են յերևալ շուկայում)։ Այդ կոնզենսատորներն ամենից հարմարն են Յեթե կոնզենսատորն ունի յերկու պտտումն էլ — և արագ, և դանդաղեցրած — ապա այն դանդաղեցումը, վոր տալիս է վեռները, կարող է մեծ լինել։ Իսկ յեթե կոնզենսատորն ունի միայն վեռներային պտտում, ապա չափից ավելի դանդաղեցումն անհարմար է, վորովհետև նրա՝ ամաղջ աստիճանների շրջանով (шкала) անցումը մեծ ժամանակ կեղի։ Այդպիսի կոնզենսատորների համար դանդաղեցումը մեծ չպետք է լինի։

Գոյություն ունեն նաև կոնզենսատորներ ճերդներով («подталкивателями», այսինքն՝ այնպիսի հարմարանքներով, վորոնք օգնում են աստիճանային մի մասի (վոր մեծ մասի) դանդաղ անցման համար, սովորաբար բաժանելու 4 — 5 ի։ Այդ

պիսի կոնզենսատորներն աշխատում են միանգամայն բավարար (ուսեն, այսպես ասած, ունակության և դանդաղ և աչաղ փոփոխում), բայց ավելի քիչ են հարմար, քան նրանք, վորոնք ունեն ամբողջ աստիճանավոր շրջանի վեռներային անցում։

ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առայժմ խոսենք փոփոխական կոնզենսատորների ունակությունների մասին, վորոնք ծառայում են կոնսուլների լարման համար։ Սովորաբար կոնզենսատորները — վաճառքում և կոնսուլակցիաների նկարագրության ժամանակ — բնորոշվում են մաքսիմալ ունակության մեծությամբ, վորն ստացվում է շարժական թիթեղների ամբողջությամբ դրված (введенных) լինելու դեպքում։ Փոփոխակի կոնզենսատորների մաքսիմալ ունակությունը ստանալում է բավականին լայն սահմաններում — մոտավորապես 300 ից մինչև 1000 սանտիմետրի սահմաններում։ Հատուկ կարճալիքային կոնզենսատորներն ունեն մաքսիմալ ունակություն՝ 100 ի չափ, յերբեմն մինչև 250 սանտիմետր։

Կոնզենսատորի մաքսիմալ ունակության մեծությունը վերելվում հիշված սահմաններում, իրեն, ընդունելի աշխատանքի վրա, կարելի չէ ասել։ ԱՆՄԻՋԱԿԱՆ ազդեցություն չի ունենում։ Գոնաուրները կոնզենսան իրենց լարումները, զեներային կառաջանա, զրիչիկը կաշխատի և յեթե ընդունելի լարման վրա վերև է մի կայան լինի. ապա ընդունելի կեղծի միանգամայն նորմալ 300 սմ. մաքսիմալ ունակության կոնզենսատորի դեպքում, ինչպես այդ նա կաներ համապատասխան կոնզենսատոր ամենայալ դեպքում, յերբ այդ կոնզենսատորը 750 սմ. մաքսիմալ ունակություն ունենար։ Դրա համար էլ այն ազդիսիրողները, վորոնք վորեն մի նկատողության համաձայն պատրաստելով մի չափաատող ընդունիչ, փնտրում են նրա անճշտության արտաճանն այն ճանում, վոր իրենց ձեռքով տրված է 520 սմ. կոնզենսատոր, նկարագրության մեջ նշված 450 սմ. ի փոխարեն, — այդպիսի ազդիսիրողներն ամենևին ճիշտ չեն (յեթե ավելի խիստ չափանք)։

